



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

16.05.2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն **Աշոտ Ղահրամանյանին**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
**Գրիշա Բալասանյանից**  
Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն Ղահրամանյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հողված է պատրաստում մարզի ճանապարհաշինական ոլորտի վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2011-2016թթ. Արմավիրի մարզում քանի՞ կիլոմետր, ճանապարհ է վերանորոգվել և որքան գումար է հատկացվել (տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ ճանապարհների տեսակի՝ մարզային, համայնքային, հանրապետական նշանակության, վերանորոգման տեսակի՝ ասֆալտապատում, փոսալցում և այլն, ինչպես նաև յուրաքանչյուր ճանապարհի համար հատկացված կամ ծախսված գումարի չափը):
2. Նշված ժամանակահատվածում ինչ աղբյուրից են ֆինանսավորվել վերը նշված ճանապարհաշինական ծրագրերը, որ ընկերությունների կողմից (տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների առանձին-առանձին, նշել ֆինանսավորման աղբյուրը՝ պետություն, դոնոր կազմակերպություններ և այլն):
3. Ի՞նչ սկզբունքով են ընտրվել վերանորոգում իրականացրած ընկերությունները (տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին):
4. Վերը նշված ժամանակահատվածում իրականացված ճանապարհաշինական ծրագրերը որ գերատեսչության կամ պետական մարմնի պատվերով են իրականացվել (տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, ճանապարհահատվածի և պատվիրատուի):
5. Տրամադրել վերը նշված ժամանակահատվածում վերանորոգված ճանապարհների նկատմամբ տեխնիկական ստուգում իրականացրած ընկերությունների վերաբերյալ տեղեկություններ (տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձին-առանձին, նշել ճանապարհահատվածը, ընկերության անվանումը, պայմանագրով նախատեսված գումարի չափը):
6. Վերը նշված ժամանակահատվածում վերանորոգված ճանապարհները հանձնվել է՞ն շահագործման, եթե ոչ ապա ինչ պատճառով:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ **Գրիշա Բալասանյան**

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
Մտնից թիվ 093/7278-17  
16 05 2017թ.